Հետազոտական աշխատանք

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ. հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com +37493581908
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտության թեմա	Բանավոր հաղորդակցման զարգացումը ֆրանսերենի դասավանդման ընթացքում 9-րդ դասարանում:
Ուսուցչի տվյալներ • Անուն, ազգանուն, հայրանուն • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	Զարուհի Կարապետյան Վարդանի Ուսուցիչ +374 94 758304 Kzaruhi@mail.ru Ֆրանսերեն II - IX

Ուսումնական հաստատության տվյալներ	Երևանի Ստ.Զորյանի անվ. N56 հիմն. դպրոց ք.Երևան փ.Հր.Քոչար 13 +374 010 272070 school56@schools.am yerevan_school@mail.ru
• Անվանումը, հասցե • Հեռախոս • էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե	

Բովանդակություն

Հետազոտություն 1
Տիտղոսաթերթ 1
Բովանդակություն 2
Ներածություն 3
Օգտագործված մեթոդներ..... 6
Գրականության ակնարկ 7
Եզրակացություններ,առաջարկություններ..... 14
Օգտագործված գականության ցանկ 15
Հավելվածներ 16

Ներածություն

Նպատակը եւ հետազոտական հարցը	Այսօր մեր իրականության մեջ օտար լեզու սովորողը պետք է յուրացնի ոչ միայն տվյալ լեզվի քերականությունը, ձևավորի արտասանական կարողություններ, սահուն ընթերցի, այլ նաև պետք է կարողանա բանավոր հաղորդակցվել՝ զրուցակցին ունկնդրելով լսել, հասկանալ և լսածին արձագանքել՝ գրագետ կազմելով բանավոր խոսք ցանկացած թեմայի շուրջ: Անշուշտ օտար լեզվով բանավոր հաղորդակցման զարգացման մեջ մեծ դեր է կատարում լեզվակրի հետ շփվելը, ինչպես նաև տվյալ երկիր այցելելը: Սա ապահովում է մոտիվացիայի բարձրացումը օտար լեզվի (ֆրանսերենի) ուսուցման մեջ և մեծացնում է բանավոր հաղորդակցվել կարողանալու մեծ ցանկությունը: Հանրակրթության տարբեր աստիճաններում հաղորդակցական կարողունակությունների զարգացման հնարավորությունները և միջոցները տարբեր են: Բանավոր խոսք կարելի է զարգացնել տեքստերի, բանաստեղծությունների, երգերի, մենախոսությունների, երկխոսությունների, դերախաղերի,բեմականացումների, ֆիլմերի, մուլտֆիլմերի, հաղորդումների միջոցով: Աշխատանքի նպատակն է ներկայացնել 9-րդ դասարանի սովորողների ֆրանսերենի բանավոր հաղորդակցման զարգացմանը նպաստող մեթոդներ ֆրանսերենի դասավանդման ընթացքում: Հարց. Ի՞նչ մեթոդներով կարելի է զարգացնել բանավոր հաղորդակցումը 9-րդ դասարանում:

Թեմայի կարեւորությունը եւ նշանակությունը Ձեր/թիրախային խմբի համար	Երբ փոքրիկը ծնվում է և աստիճանաբար սկսում է ճանաչել իրեն շրջապատող աշխարհը,նրա մոտ ցանկություն է առաջանում արտահայտել իր ներաշխարհը `այն ինչ տեսնում է, լսում, զգում: Սկզբում դա տեղի է ունենում շարժումներով՝ որոշ հնչյուններ արտաբերելով, զգացմունքներ արտահայտելով՝ ծիծաղ,լաց,…, հետո բառեր, բառակապակցություններ մինչև կայուն խոսք է ձևավորվում: Ծնված պահից մարդն սկսում է ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ: Բնականաբար երեխան իր կյանքի այդ փուլում դեռ չգիտի ոչ՛գրել ու կարդալ, ոչ՛ քերականություն; այլ պարզապես արտաբերում է իր լսածը և հավանություն ստանալով մեծերի կողմից;որ իր ասածը ճիշտ է տվյալ զրույցում, երկխոսությունում. շարունակում է իր աշխույժ բանավոր հաղորդակցումը: Եթե հայ երեխան ծնված պահից ապրի ֆրանսիական ընտանիքում,ապա նա կսկսի խոսել ֆրանսերեն և հակառակը, եթե ֆրանսիացի երեխան ծնված պահից ապրի հայկական ընտանիքում,կսկսի խոսել հայերեն: Բերված օրինակը վերաբերվում է բոլոր ազգերին: Այսինքն երեխան արտաբերում է այն, ինչ լսում է: Նույնպես էլ սովորողների շրջանում; եթե շատ լսեն օտար լեզվով տեքստեր, երգեր,դիտեն ֆիլմեր, մուլտֆիլմեր; ապա ավելի հեշտ և արագ կսովորեն խոսել, ազատ հաղորդակցվել: Ուսուցման գործընթացի ժամանակ շատ կարևոր է ստեղծել իրավիճակ; որտեղ սովորողը կկարողանա ունկնդրել (հատկապես լեզվակրին) և արտաբերել: Իհարկե, ի տարբերություն փոքրիկի; դպրոցական երեխան իր կյանքի այս փուլում գիտի ուսումնասիրած օտար լեզվի (տվյալ դեպքում ֆրանսերենի)

քերականությունը, գրել և կարդալ: Բանավոր հաղորդակցման ամենաարդյունավետ միջոցն է այցելել տվյալ երկիր և շփվել տեղացիների հետ; որը լեզուն սովորելու մոտիվացիայի մեծ աղբյուր է հանդիսանում: Բոլորին է հայտնի; որ սովորելն ընդհանրապես բարդ գործընթաց է, հարկավոր է այն հնարավորինս դյուրին դարձնել: Բանավոր խոսքի զարգացման համար շատ կարևոր է միջավայրը; բացի դպրոցի դասերի ընթացքում; լեզուն լսելն անհրաժեշտ է նաև կենցաղում՝ փողոցում, տրանսպորտում, խանութում, … : Երբ նախորդ տարի երեխաների խումբ տարա Ֆրանսիա (ուսումնական այց); ակնհայտ տեսանելի դարձավ նրանց բանավոր խոսքային հաղորդակցման կարողությունների առաջընթացը: Նրանք այլևս լսելու, հասկանալու և զրուցակցին արձագանքելու դժվարություն չունէին: Օտար լեզվով բանավոր հաղորդակցման զարգացումը կատարվեց ակամա, դյուրին՝ հաճելի միջավայրում, անմոռանալի հիշողություններով և դրական զգացմունքներով լի: Որն էլ իր հերթին խթան հանդիսացավ շարունակել ուսումնասիրել ֆրանսերենը:

Մեր իրականության մեջ կան ցավալի դեպքեր; երբ երեխան ծնվում է լսելու կարողությունից զուրկ: Փաստ է; որ նման երեխաները չեն կարողանում նաև խոսել: Պատահական չէ այս երկուսը միասին են հանդես գալիս; որը բժշկության մեջ անվանվում է «խուլ և համր» տերմինով:

Այսինքն հիմնվելով նաև այս փաստի վրա,կարելի է եզրակացնել,որ ցանկացած լեզու սովորելիս շատ կարևոր է լսելու կարողությունը:

Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	Բանավոր հաղորդակցման կարողունակության զարգացմանը
Վերապատրաստման ո՞ր թեմայի շրջանակում է անդրադարձ կատարվել այս հիմնախնդրին/ոլորտին	Ֆրանսերենի դասավանդման մեթոդիկա
Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	Ստ.Զորյանի անվ. թիվ 56 հիմն. դպրոցի 9-րդ դաս, 23 աշակերտ՝ 11 տղա,12 աղջիկ
Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ քանական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով եւ այլն)	Հետազոտության ընթացքում կիրառվել է քանակական հետազոտություն հարցաթերթիկի միջոցով: Թե՛ դասաժամերին, թե՛ Ֆրանսիա կատարած այցելության ժամանակ, դիտվել են սովորողների կատարած քայլերը և նրանց բանավոր հաղորդակցման աստիճանական զարգացումը, ապա դրանք ի մի են բերվել հարցաթերթիկների վերլուծությամբ:: Քայլ առ քայլ նկատելի էր սովորողների հաջողությունները օտար լեզվով՝ ֆրանսերենով հաղորդակցվելու գործընթացում:

Հետազոտության իրականացման ժամանակահատվածը	2x45 րոպե

Հիմնական բովանդակություն

Գրականության ակնարկ ● Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, ● Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: **<u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u>**	**Բանավոր հաղորդակցման զարգացումը Ֆրանսերենի դասավանդման ընթացքում 9-րդ դասարանում** Բանավոր հաղորդակացումը բնական կարողություն է, որն ի վերուստ է տրված: Այնուամենայնիվ այն զարգացնելու կարիք կա մարդու կյանքի տարբեր փուլերում: Որքան էլ լսելու կարողությունը մեծ և առանցքային դեր ունի բանավոր հաղորդակցման մեջ, միևնույնն է հարկավոր է և անհրաժեշտ գիտակցաբար սովորել նաև օտար լեզվի առավել գործածական բառապաշար և քերականություն՝ գրագետ խոսք կառուցելու համար: Որպես կանոն բանավոր խոսքն ավելի հեշտ կիրառելի է քան գրավոր խոսքը: Բանավոր հաղորդակցման ժամանակ բառերի ուղղագրության,նախադասության կետադրության վրա կենտրոնացում չի պահանջվում; սակայն բառապաշարի և քերականության իմացությունն անհրաժեշտ է: Նա պետք է կարողանա արտահայտվել՝ մենախոսել, երկխոսել ամենապարզ թեմաների շուրջ : Ըստ հանրակրթության պետական չափորոշչի հանրակրթական հիմնական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների շրջանավարտը պետք է առնվազն երկու օտար լոզուներով հասկանա ծանոթ,

	պարբերաբար հանդիպող թեմաներով բանավոր և գրավոր խոսքի հիմնական իմաստը ,լեզվակիր երկրներում կարողանա կողմնորոշվել և հաղորդակցվել հաղորդակցական պարզ իրավիճակներում: (Հանրակրթության պետական չափորոշիչ, էջ 12,Երևան 2021թ) Զարգացնել բանավոր հաղորդակցությունը ենթադրում է նաև ծանոթանալ ուսումնասիրվող օտար լեզվի մշակույթին: Հաղորդակցություն և մշակույթ դասընթացները հավասարակշռված մոտեցում են ցուցաբերում դասավանդման հարցում և ֆրանսերենի գրագիտության վրա հիմնված ուսուցում: Մշակույթն ինտեգրող այս մեթոդաբանությունը թույլ է տալիս սովորողներին ֆրանսերենով հաղորդակցվելու համար անհրաժեշտ հմտություններ ձեռք բերել: Հետազոտությունները ցույց են տալիս, որ բանավոր հաղորդակցման հմտությունները լեզվի ուսուցման հիմքն են: Բանավոր հաղորդակցության երկու հիմնական նպատակ կա. • Աշակերտը լսում է՝ կառուցելու փոխանցված հաղորդագրության իմաստը և ցույց է տալիս, թե ինչպես է այն հասկանում. • Աշակերտը խոսում է մտքերը փոխանցելու և ուրիշների հետ շփվելու համար: Այս երկու նպատակները կուղղորդեն բանավոր հաղորդակցության ուսուցումն ու գնահատումը: (Ուսուցման բանավոր հաղորդակցության ուղեցույց փաստաթուղթ 2-րդ հրատարակություն; էջ 9) Դասարանում պետք է ստեղծել տարբեր թեմատիկ իրավիճակներ,որպեսզի սովորողները կարողանան արտահայտվել: Կազմակերպել դերախաղեր, երկխոսություններ, զրույցներ՝ խուսափելով քարացած հարց ու պատասխան

տարբերակից: Քարացած արտահայտությունները, խոսքային մոդելները կարելի է սովորել թեմայի սկզբում; այնուհետև դրանք փոխարինել հոմանիշ բառերով, նույն միտքն արտահայտող մտքերով: Սա կօգնի սովորողներին իրենց սովորածն օգտագործելու կյանքում:

Հասարակության կյանքից բխող բանավոր հաղորդակցման իրավիճակն ամբողջական և բովանդակալից լինելու համար, պետք է ներառի հետևյալը.

բանավոր, ընթերցանության և գրավոր պրակտիկայի ինտեգրում.

Աշակերտներին ներկայացված առարկաների հետաքրքրությունը.

գործունեության ձև, ստեղծագործականություն (հերոսներ, զգեստներ և այլն), խաղեր և այլն.

հանդիսատեսի դիտարկում՝ իրական հասցեատեր (այլ դաս, տեսախցիկ, հյուրեր և այլն) և հանդիսատեսի ակտիվ մասնակցություն (դերեր, հարցեր, գնահատում և այլն):

(Դեպի բանավոր հաղորդացական իրական ուսուցում https://www.cairn.info/revue-le-francais-aujourd-hui-2003-2-page-109.htm)

Բանավոր խոսքի զարգացման մեջ չպետք է բացառել գրավոր խոսքը, քանի որ նրանք միմյանց հետ փոխկապակցված են. չէ՞ որ հաղորդակցումը հիմնված չէ միայն բանավոր խոսքի վրա:

Ֆրանսիայում խոսել սովորելը ավելի ու ավելի շատ է դրսևորվում տարրական և միջին դպրոցի ուսումնական ծրագրերում (Քվեբեկում տարրական և միջնակարգի համարժեքը): Այս հոդվածում հետազոտող, պրոֆեսոր և Ֆրանսիայի ծրագրերի բարձրագույն խորհրդի փոխնախագահ

Սիլվի Պլանը հիմնավորում է դպրոցական ուսումնական ծրագրերում լեզվի զբաղեցրած աճող տեղը:
Նրա խոսքով, խոսելն ու գրելը պետք է երկուսն էլ ուսման առարկա լինեն՝ չընկնելով բանավոր խոսքի վարպետ ուսուցման մեջ: Վերջինս բաղկացած է «գիտելիքների և նոու-հաուի մի շարքից, որոնց տիրապետումը խարսխված է գործնականում և վերլուծության մեջ»:
Բանավորը կանխատեսում է գրավորը:(La communication orale: pourquoi et comment l'enseigner? Բանավոր հաղորդակցություն. ինչու և ինչպես սովորեցնել այն:
https://rire.ctreq.qc.ca/communication-orale/)

Բանավոր խոսքի ուսուցանման ժամանակ չպետք է մոռանալ,որ սովորողներն ունեն տարբեր կարողություններ, մտածելակերպ, միջավայր, քանի օտար լեզու գիտեն և այլն: Հետևաբար մատուցվող գիտելիքը կառուցվում է ըստ սովորողների ունակության աստիճանի:

Ֆրանսերենի բանավոր իմացության մակարդակը վերաբերում է այն աստիճանին, որով աշակերտը կարող է հասկանալ և բանավոր խոսել այդ լեզվով. Այս մակարդակը տատանվում է՝ կախված նրանից՝ սովորողը ֆրանկոֆոն է, խառը, թե՞ ալոֆոն, արդեն խոսում է երկու կամ երեք այլ լեզուներով և կարող է զգալ կամ չզգալ այն հիասթափությունները, որոնք առաջանում են դրա բացակայության պատճառով:
Նրանք նաև պետք է իմանան, որ մարդը սովորում է նոր լեզուն,անցնում է տարբեր փուլերով, ձևավորում է լեզվական հմտություններ:
(Արդյունավետ ուսուցման ուղեցույց բանավոր հաղորդակցություն մանկապարտեզից մինչև 3-րդ դասարան

	տարին 2008 թ - Guide d'enseignement efficace de la communication orale de la maternelle à la 3e année 2008 https://assets.ctfassets.net/cfektv4t16rw/3PWm0Bg8i6yl4BYsbluclh/03449c349d66a2505ce51def28ba420d/GEE_Communication_orale_M_3__1_.pdf)
Հետազոտության ընթացքը	Հետազոտության ամենասկզբում երեխաներին առաջարկել եմ դիտել հայտնի ֆրանսիացի քանդակագործների աշխատանքների նկարներ և համապատասխանեցնել ամբողջական նկարը կիսված պատկերի հետ: Աշակերտները կարողացան ճիշտ պատասխանել. 1-D/2-C/3-A/4-B : Սկսեցինք աշխատել բառապաշարի վրա հարցերի միջոցով՝ ածականներ, զգացմունք արտահայտող բառեր, արտահայտություններ: 1.Աշակերտները նկարագրեցին արձանները. նստած են, կանգնած են, ուղիղ են, կոր են, գլուխն իջեցված է , ձեռքը բարձրացրած է, թևերը ձգված են,…

	2. Հետո ասացին՝ ինչ զգացմունքներ են արտահայտում քանդակները՝ ամբարտավանություն, իշխանություն, հանգստություն, վիշտ, զայրույթ, քաջություն, հուսահատություն, անհուսություն, մեղմություն, կասկած, էնեգիայով լի, ձանձրույթ,հպարտություն, ուժ, սառնություն, առատաձեռնություն, նախանձ, մելամաղձություն, առեղծվածային, քնքշություն, խստություն, տխրություն, բռնություն,… 3. Աշակերտները ներկայացրին, թե ինչ ոգացողություն ունեն քանդակներից յուրաքանչյուրի դիմաց կանգնելիս՝ հիացմունք, զվարճանք, հետաքրքրասիրություն, զգացմունք, ձանձրույթ, անհասկանալիություն, անտարբերություն, հաճույք, տխրություն,… 4. Երեխաներից յուրաքանչյուրն ասաց, եթե ունենար ընտրության հնարավորություն; ապա ո՞ր արձանը կցանկանար տեսնել իր քաղաքում կամ իր ապրած թաղամասում: Այս բոլոր բառերն իրենց թարգմանություններով զուգահեռաբար գրեցին իրենց բառատետրերում: Այնուհետև դասարանը բաժանվեց խմբերի (աշակերտներն իրենց ցանկությամբ խմբերը կազմեցին, յուրաքանչյուրում 5 կամ 6 աշակերտ) և ստացան հանձնարարություն. Ընտրել նկարներից մեկը, համացանցում գտնել քանդակի հեղինակի անունը, նրա մասին գրել կենսագրական և մասնագիտական տեղեկություն; պատրաստել և հաջորդ դասին ներկայացնել սահիկաշար տվյալ քանդակագործի մի քանի այլ քանդակների նկարներով և դրանց անվանումներով:

Կատարեն ներխմբային դերաբաշխում՝ տեքստը և նկարները գտնողները, համապատասխան ձևավորմամբ սահիկաշարը պատրաստողները,…

Ուսուցչի համար՝

Ֆրեդերիկ Բարտոլդի (1834-1904) - Ազատություն

Էդգար Դրգա (1834-1914)-Փոքրիկ պարուհին

Օգուստ Ռոդեն(1840-1917)-Մտածողը

Անտուան Բուրդել (1861-1929)- Հերակլես նետաձիք

Հաջորդ դասին երեխաներն ըստ խմբերի էլեկտրոնային գրատախտակին ներկայացրին իրենց աշխատանքները սահիկաշարերի տեսքով: Յուրաքանչյուր խումբ իր սահիկի վերջում կազմել էր առնվազն երկու հարց և ուղղել ամբողջ դասարանին: Հարցերի նպատակն էր համոզվել իրենց մյուս խմբերի ընկերները լսել և հասկացել են, թ՞ե ոչ: Անհրաժեշտության դեպքում բացատրում էին: Յուրաքանչյորու խումբ իր նյութը ներկայացնելու համար ուներ հինգ րոպե: Գրառումների օրագրում զուգահեռաբար գրեցինք քանդակագործի և իր քանդակի անվանումը :

Անդրադարձ կատարելով՝ երեխաները լրացրին փոխներգործուն նշանների համակարգի աղյուսակը.

Գիտեի	Անծանոթ է	անհասկանալի է	Հիանալի է
+	-	°	´

	<table><tr><td>…</td><td>…</td><td>…</td><td>…</td></tr></table> Երեխաներից յուրաքանչյուրը մեկ նախադասությամբ արտահայտեց իր կարծիքն ասելով՝ « Եթե ես քանդակագործ լինեի, կքանդակեի այնպիսի քանդակ, որը կարտահայտեր …..; …….; …… » (զգացմունք արտահայտող ածականներից առնվազն երեքը):

Եզրակացություններ, առաջարկություններ

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	Հետազոտությունը հիմնվել է փորձարկված դասի վրա,աշակերտների և հրավիրյալ դասալսողների կողմից լրացվել են հարցաթերթիկներ, վերլուծվել են դրանց տվյալները: Հետազորության արդյունքում ստացած տվյալների հիման վրա պարզ դարձավ,որ աշակերտներն անծանոթ բառապաշարը ավելի դյուրին են սովորում նկարների միջոցով,սիրում են աշխատել ավելի շատ խմբում,քան անհատապես: Խմբում կատարվում է դերաբաշխում և աշխատանքը բավականկին հեշտանում է: Բացի այդ իրականանում է գլխավոր նպատակը՝ զարգանում է սովորողների բանավոր խոսքը,իրականանում է հաղորդակցում օտար լեզվով:Ինչպես նաև մշակույթային դասի վերջում հարստանում է գիտելիքը:

	Աշակերտներն առաջարկել են նման դասեր հաճախ կազմակերպել ամենատարբեր թեմաներով. բնություն,խոհանոց,երաժշտություն,նախասիրություններ,պատմություն;երկրներ,նորաձրություն,սպորտ;բուլինգ, … 1. Հետաքրքիր է շակույթի վերաբերյալ դասի թեման. Շատ՝ 1,47% Բավականին՝ 2,73% 2. Սիրում են աշխատել. Խմբում՝ 3,99 Անհատապես՝ 0,42 3. Սովորել անծանոթ բառապաշարը նկարների օգնությամբ. Այո՝ 2,94 Մասամբ՝ 0,84

Օգտագործված գրականության ցանկ

1.Ուսուցման բանավոր հաղորդակցության ուղեցույց փաստաթուղթ 2-րդ հրատարակություն
L’enseignement de la communication orale 3 Français: Communication et culture

2.Դեպի բանավոր հաղորդակցության իրական ուսուցում
Vers un veritable enseignement de la communiction
https://www.cairn.info/revue-le-francais-aujourd-hui-2003-2-page-109.htm

3. La communication orale: pourquoi et comment l’enseigner? Բանավոր հաղորդակցություն. ինչու և ինչպես սովորեցնել այն:
https://rire.ctreq.qc.ca/communication-orale/

4.Արդյունավետ ուսուցման ուղեցույց բանավոր հաղորդակցություն մանկապարտեզից մինչև 3-րդ դասարան տարին 2008 թ
Guide d’enseignement efficace de la communication orale de la maternelle à la 3e année 2008
https://assets.ctfassets.net/cfektv4t16rw/3PWm0Bg8i6yI4BYsbIucIh/03449c349d66a2505ce51def28ba420d/GEE_Communication_orale_M_3__1_.pdf

5.Հանրակրթության պետական չափորոշիչ,Երևան 2021թ

Հավելվածներ

Հաշվետվության կցված նյութեր	**Հավելված 1**
● Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ) ● Նկարներ ● Արդյունքներ	Հարցաթերթիկ 1 (մասնակից աշակերտներ) Անուն, ազգանուն, դասարան ---------- 1.Հետաքրքիր էր արդյո՞ք մշակույթի վերաբերյալ դասի թեման. o շատ o բավականին o ոչ այդքան

Ինչո՞ւ ----------

2.Ինչպե՞ս եմ սիրում աշխատել.

o խմբում

o անհատական

3. Հաճելի՞ էր անծանոթ բառապաշարը սովորել նկարների նկարագրմամբ.

o այո

o ոչ

o մասամբ

Ինչո՞ւ----------

4.Ինչպիսի՞ թեմաներով կցանկանայիր դասեր ունենալ.

Ինչո՞ւ ----------

Հավելված 2

Հարցաթերթիկ 2 (հրավիրյալ դասալսող)

Անուն, ազգանուն, դասարան ----------
---

1. Հետաքրքիր էր արդյո՞ք մշակույթի վերաբերյալ դասի թեման

o շատ

o բավականին

o ոչ այդքան

Ինչո՞ւ----------

2.Դասի ընթացքում զարգացա՞վ սովորողների բանավոր հաղորդակցումը

o այո

o ոչ

Ինչո՞ւ----------

---

3. Կցանկանայի՞ք ինքներդդ հանդես գալ որպես սովորող.

o այո

o ոչ

Ինչո՞ւ----------

Դասի պլան

Ուսուցիչ	Զարուհի Կարապետյան
Դասարան	9ա
Թեմա	Քանդակագործոիթյուն
Նպատակ	Կարողանալ նկարագրել քանդակները
Վերջնարդյունք	Կարողանալ արտահայտել զգացմունքները
Կարողունակություններ	Դեպքեր; իրավիճակներ, մարդկանց նկարագրելու կարողության զարգացում:
Մեթոդներ	Մտագրոհ,Խմբային աշխատանք,քառաբաժան,գրառումների օրագիր
Օգտագործվող նյութեր	Էլ.գրատախտակ
Հիմնական հասկացություններ	Բառապաշար,,ածականներ ,արտահայտություններ,հարցեր
Ուսուցչի համար	Ֆրեդերիկ Բարտոլդի (1834-1904) - Ազատություն Էդգար Դըգա (1834-

	1914)-Փոքրիկ պարուհին Օգուստ Ռոդեն(1840-1917)-Մտածողը Անտուան Բուրդել (1861-1929)- Հերակլես նետաձիք
Ժամանակ	2x45
Ընթացք Խթանման փուլ՝ Իմաստի ընկալում՝ Հանձնարարություն	Դիտել քանդակների նկարները էլ.գրատախտակին, համապատասխանեցնել ամբողջական նկարը կիսված պատկերի հետ: Աշակերտներն արտահայտում են իրենց կարծիքները քանդակների վերաբերյալ, խոսում են նախընտրած քանդակի մասին, կատարել վարժության 1 և 2 կետերը: Իսկ 3 և 4 կետերն անհատական ; Զուգահեռաբար գրվում են անծանոթ բառերի՝ածականների թարգմանությունները: Դասարանը բաժանվի խմբերի (երեխաներն իրենց ցանկությամբ խմբերը կազմեն, յուրաքանչյուրում 5 կամ 6 աշակերտ) և ստանալ հանձնարարություն. ընտրել նկարներից մեկը; համացանցում գտնել քանդակի հեղինակի անունը, նրա մասին գրել կենսագրական և մասնագիտական տեղեկություն; պատրաստել և հաջորդ

	դասին ներկայացնել սահիկաշար տվյալ քանդակագործի մի քանի այլ քանդակների նկարներով և դրանց անվանումներով: Կատարեն ներխմբային դերաբաշխում՝ տեքստը և նկարները գտնողները, համապատասխան ձևավորմամբ սահիկաշարը պատրաստողները,… Յուրաքանչյուր խումբ 5 րոպեում ներկայացնի:
Իմաստի կշռադատում՝	Հաջորդ դասին ըստ խմբերի էլեկտրոնային գրատախտակին ներկայացնել իրենց աշխատանքները սահիկաշարերի տեսքով:Յուրաքանչյուր խումբ իր սահիկի վերջում կազմի առնվազն երկու հարց և ուղղի ամբողջ դասարանին: Հարցերի նպատակն է համոզվել իրենց մյուս խմբերի ընկերները լսում և հասկանում են, թ՞ե ոչ: Անհրաժեշտության դեպքում բացատրել: Յուրաքանչյուր խումբ իր նյութը ներկայացնելու համար ունի հինգ րոպե:
Անդրադարձ՝	Լրացնել փոխներգործուն նշանների համակարգի աղյուսակը.

+ գիտեի	- անծանոթ է

Գրառումների օրագրում գրել քանդակագործի և իր քանդակի անվանումը:

Ֆրեդերիկ Բարտոլդի (18 -
Էդգար Դըգա (1834-1914
ՕգուստՌոդեն(1840-1917
Անտուան Բուրդել (1861-

Եթե ես քանդակագործ լինեի, կքանդակեի այնպիսի քանդակ, որը կարտահայտեր ……..;……;……(ղգացմունք արտահայտող ածականներ):Աշակերտը պետք է կազմի մեկ նախադասություն՝ օգտագործելով զգացմունք արտահայտող ածականներից առնվազն երեքը:

		 0-02-0b-7cb4be1e326c17 0-02-0b-751c45c20f8bebf 0-02-0b-e5a3e5974ed6f5

Ընդգրկված չեն հիմնական էջերի մեջ